



ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՀ շրջակա միջավայրի
մոնիթորինգի արդյունքների մասին
2023 թ. 3-րդ եռամսյակ

ԿԼԻՄԱ

ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐ

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐ

ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ

ԱՆՏԱՌ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԶԱՎԱՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....	7
1. ԿԼԻՄԱ.....	10
2. ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.....	21
3. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ.....	29
Երևան.....	31
Գյումրի.....	35
Վանաձոր.....	36
Ալավերդի.....	39
Հրազդան.....	42
Արարատ.....	43
Կապան.....	44
Քաջարան.....	45
Չարենցավան.....	46
Ծաղկաձոր.....	47
Եվրոպայում մեծ տարածությունների վրա օդի աղտոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման համատեղ ծրագիր.....	51
4. ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՋՐԵՐ.....	53
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք.....	54
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք.....	59
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք.....	64
Սևանի ջրավազանային կառավարման տարածք.....	70
Սևանա լիճ.....	74
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք.....	85
Հարավային ջրավազանային կառավարման տարածք.....	89
Ջրամբարներ.....	93
Արաքս գետ.....	96
5. ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ.....	99
6. ԱՆՏԱՌՆԵՐ.....	103
Հավելված 1. Միջին ամսական և տասնօրյակային ջերմաստիճաններն ու շեղումները 1961-1990թթ. համապատասխան նորմաներից 2023 թվականի 3-րդ եռամսյակում.....	112
Հավելված 2. Ամենաբարձր և ամենացածր ջերմաստիճանները 2023 թվականի 3-րդ եռամսյակում.....	115
Հավելված 3. Գետերի ջրերի որակը 2023 թվականի 3-րդ եռամսյակում.....	117
Հավելված 4. Դիտակետերի տեղադրության ցանկ.....	146
Հավելված 5. Ցուցանիշների ցանկ.....	163
Հավելված 6. Նորմերի և սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների ցանկ.....	165

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Երաշտի ինտենսիվության գնահատումը 2023 թվականի ամռանը.....	13
Աղյուսակ 2. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2023թ. հուլիս	23
Աղյուսակ 3. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2023թ. օգոստոս.....	24
Աղյուսակ 4. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2023թ. սեպտեմբեր.....	27
Աղյուսակ 5. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.....	50
Աղյուսակ 6. Ամբերդի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.....	52
Աղյուսակ 7. Հյուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	54
Աղյուսակ 8. Ախուրյանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	59
Աղյուսակ 9. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	64
Աղյուսակ 10. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	70
Աղյուսակ 11. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2023 թվականի 3-րդ եռամսյակում.....	74
Աղյուսակ 12. Սևանա լճի ջրի որակը 2023 թվականի 3-րդ եռամսյակում.....	80
Աղյուսակ 13. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	85
Աղյուսակ 14. Հարավային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.....	89
Աղյուսակ 15. Ջրամբարների ջրալցվածությունը 2023 թվականի 3-րդ եռամսյակում.....	93
Աղյուսակ 16. Ջրամբարների ջրի որակը 2023 թվականի 3-րդ եռամսյակում.....	94
Աղյուսակ 17. Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգի գնահատման արդյունքները 2023 թվականի 3-րդ եռամսյակում.....	97

Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1. Օդի միջին ամսական, սեզոնային ջերմաստիճանը	10
Գծապատկեր 2. Օդի ամսական, սեզոնային տեղումների քանակը	10
Գծապատկեր 3. Օդի ջերմաստիճանի շեղումները նորմայից ամռան սեզոնին 1935-2023 թթ.....	11
Գծապատկեր 4. Մթնոլորտային տեղումների շեղումները նորմայից ամռան սեզոնին 1935-2023 թթ	11
Գծապատկեր 5. Ամառային օրերի քանակը 2023 թվականի ամռանը և նորման	12
Գծապատկեր 6. Օրական առավելագույն ջերմաստիճանի արժեքները 2023 թվականի ամռանը	13
Գծապատկեր 7. Օրական նվազագույն ջերմաստիճանի առավելագույն արժեքները (տոx) 2023 թվականի ամռանը և նորման	13
Գծապատկեր 8. Ամենաերկար ալիքի տևողությունը ըստ առավելագույն ջերմաստիճանի.....	15
Գծապատկեր 9. Տաք ալիքով օրերի թիվը ըստ առավելագույն ջերմաստիճանի	16
Գծապատկեր 10. Ամենաերկար ալիքի տևողությունը ըստ նվազագույն ջերմաստիճանի	16
Գծապատկեր 11. Տաք ալիքով օրերի թիվը՝ ըստ նվազագույն ջերմաստիճանի,	17
Գծապատկեր 12. Օրական առավելագույն, նվազագույն և միջին ջերմաստիճանները երևանում 2023 թ ամռանը	19
Գծապատկեր 13. Ամսական տեղումների քանակը և դրանց շեղումները նորմայից.....	20
Գծապատկեր 14. Տեղումներ, հուլիս 2023թ.....	22
Գծապատկեր 15. Տեղումներ, օգոստոս 2023թ.....	24
Գծապատկեր 16. Տեղումներ, սեպտեմբեր 2023թ.	27
Գծապատկեր 17. մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների ..	29
Գծապատկեր 18. Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների	30
Գծապատկեր 19. Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների	30
Գծապատկեր 20. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	31
Գծապատկեր 21. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	32
Գծապատկեր 22. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	32
Գծապատկեր 23. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օդոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	32
Գծապատկեր 24. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական.....	35
Գծապատկեր 25. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	35
Գծապատկեր 26. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	35
Գծապատկեր 27. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական.....	36
Գծապատկեր 28. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	36
Գծապատկեր 29. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	36
Գծապատկեր 30. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	39
Գծապատկեր 31. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	
Գծապատկեր 32. Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	39
Գծապատկեր 33. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	42
Գծապատկեր 34. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	
Գծապատկեր 35. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտ երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	42

Գծապատկեր 36. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	43
Գծապատկեր 37. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները գծապատկեր 38. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	43
Գծապատկեր 39. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	44
Գծապատկեր 40. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	44
Գծապատկեր 41. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	45
Գծապատկեր 42. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	45
Գծապատկեր 43. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	46
Գծապատկեր 44. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	46
Գծապատկեր 45. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	47
Գծապատկեր 46. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	47
Գծապատկեր 47. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	47
Գծապատկեր 48. Ամբերդի կայանում ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	51
Գծապատկեր 49. Ամբերդի կայանում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները	51
Գծապատկեր 50. Փամբակ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	55
Գծապատկեր 51. Դեբեդ գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները	56
Գծապատկեր 52. Ախթալա գետում պղնձի կոնցենտրացիաների փոփոխությունները	56
Գծապատկեր 53. Ախթալա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները	56
Գծապատկեր 54. Հյուսիսային ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները.....	57
Գծապատկեր 55. Մեծամոր գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	59
Գծապատկեր 56. Ախուրյանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները.....	60
Գծապատկեր 57. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները .	61
Գծապատկեր 57. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները	61
Գծապատկեր 58. Ախուրյանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջր մակարդակների փոփոխությունները	61
Գծապատկեր 59. Ախուրյանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները	62
Գծապատկեր 60. Ախուրյանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակների փոփոխությունները.....	62
Գծապատկեր 61. Քասախ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները.....	65
Գծապատկեր 62. Հրազդան գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	65
Գծապատկեր 63. Հրազդան գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	65
Գծապատկեր 67. Հրազդանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները	66
Գծապատկեր 68. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները...	67
Գծապատկեր 69. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները	67
Գծապատկեր 70. Հրազդանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները	68
Գծապատկեր 71. Հրազդանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակների փոփոխությունները	68
Գծապատկեր 69. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	71
Գծապատկեր 70. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	71

Գծապատկեր 71. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	71
Գծապատկեր 75. Սևանի ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի ծախսերի փոփոխությունները	72
Գծապատկեր 76. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները	73
Գծապատկեր 75. Մեծ Սևանում ամռնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	78
Գծապատկեր 76. Փոքր Սևանում ամռնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	79
Գծապատկեր 77. Մեծ Սևանում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	79
Գծապատկեր 78. Փոքր Սևանում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	79
Գծապատկեր 79. Մեծ Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	78
Գծապատկեր 80. Փոքր Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	78
Գծապատկեր 81. Արփա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները	85
Գծապատկեր 85. Արարարտյան ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի ծախսերի փոփոխությունները	86
Գծապատկեր 86. Արարարտյան ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները	86
Գծապատկեր 87. Արարարտյան ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները	87
Գծապատկեր 88. Արարարտյան ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները	87
Գծապատկեր 86. Կարճևան գետում պղնձի կոնցենտրացիաների փոփոխությունները	90
Գծապատկեր 87. Վարարակ գետում նիտրիտ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	90
Գծապատկեր 88. Հարավային ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի ծախսերի փոփոխությունները	91
Գծապատկեր 89. Երևանյան լճում նիտրիտ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	93
Գծապատկեր 91. Երևանյան լճում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները	94

Հապավումներ

ՍԹԿ	սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՋԿՏ	ջրավազանային կառավարման տարածք
ԸԱԱ	ընդհանուր անօրգանական ազոտ
ԸԼԱ	ընդհանուր լուծված աղեր
ԿԶՆ	Կախության չոր նյութեր
ԹԿՊ ₅	թթվածնի հնգօրյա կենսաբանական պահանջարկ
ԹՔՊ	թթվածնի քիմիական պահանջարկ

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի («Հայհիդրոմետ» ՊՈԱԿ) 2023 թվականի 3-րդ եռամսյակի տեղեկագրում ներկայացված են կլիմայական նկարագրության, եղանակային երևույթների, մթնոլորտային օդի որակի, մթնոլորտային տեղումների որակի և քանակի, մակերևութային և ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի և քանակի, հողային ծածկույթի, անտառների մոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվություն:

«Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի աշխատանքային ծրագրերը կազմվում են կանոնադրության համաձայն և ղեկավարվելով հետևյալ հիմնական իրավական ակտերով.

❖ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N1902-Լ որոշում:

❖ ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի ««Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2021-2023 թվականների ընթացքում կատարման ենթակա պետական նշանակության հիդրոոդերևութաբանական աշխատանքների ծրագիրը և նախատեսվող միջազգային համագործակցության միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N792-Լ որոշում:

❖ ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2023 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» N1520-Ն որոշում:

❖ ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետերի ցանկը հաստատելու և Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի ապրիլի 21-ի N 121-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1584-Ն հրաման:

Օդերևութաբանական դիտարկումներ կատարվում են հանրապետության տարածքի 42 (այդ թվում՝ 4 դժվարամատչելի և 2 մասնագիտացված) օդերևութաբանական կայանում, որից 40-ում համաժամանակյա իրականացվում են ավտոմատ դիտարկումներ: Դիտարկումներն իրականացվում են Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով և միջազգային ստանդարտներին համապատասխան: Կատարվում են դիտարկումներ օդերևութաբանական բոլոր տարրերի նկատմամբ, ինչպիսիք են՝ օդի և հողի ջերմաստիճանը, մթնոլորտային ճնշումը, քամու ուղղությունը և արագությունը, օդի խոնավությունը, տեղումների քանակը, ամպամածության ձևը և քանակը, հորիզոնական տեսանելիությունը, մթնոլորտային երևույթները և այլ: Նորմաները հաշվարկված են բազմամյա դիտարկումների հիման վրա:

Մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայանում, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շաբաթական՝ պասիվ նմուշառման դիտակետում, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: Անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ պարունակող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շաբաթական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է

սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 91 դիտակետ (այդ թվում 80 գետային, 2 ջրանցքի, 5 ջրամբարային և 4 Սևանա լճի) Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա: 91 դիտակետում իրականացվում են ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների ամենօրյա դիտարկումներ: 80 գետային և 2 ջրանցքի դիտակետերում իրականացվում են ջրի ելքի չափումներ (տարեկան 25-35 անգամ): Հիդրոլոգիական դիտակետերից 9-ում տեղադրված են ջրի մակարդակի ավտոմատ մակարդակաչափեր (ռադարային կամ ինքնագրային), որոնցից անընդհատ ռեժիմով տեղեկատվությունը արբանյակային կամ GSM կապի միջոցով փոխանցվում է Հիդրոլոգիայի ծառայություն:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է ՀՀ 6 ջրավազանային կառավարման տարածքի գետերի, ջրամբարների, Արփա-Սևան, Որոտան-Կեչուտ ջրատարի և Սևանա լճի 151 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական ավելի քան 45 ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված են ՀՀ 6 ջրավազանային կառավարման տարածքի 119 ստորերկրյա ջրաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի/ճնշման և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Տարեկան 2 անգամ կատարվում է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ 55 ջրաղբյուրում, որոնցից յուրաքանչյուրում որոշվում է շուրջ 40 ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, մետաղներ, աղային ռեժիմի տարրեր): Ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թ. դեկտեմբերի 25-ի N876-Ն հրամանի:

Կոմունալ աղբավայրերի հարակից տարածքներում կայուն օրգանական աղտոտիչների պարունակությունները որոշելու համար կատարվում են հողի նմուշառումներ: Յուրաքանչյուր նմուշում որոշվում են մինչև 19 քլորօրգանական պեստիցիդներ և 24 պոլիքլորացված բիֆենիլներ: Կատարված դիտարկումների արդյունքները հրապարակվում են տարեկան տեղեկագրում:

«Եվրոպայում մեծ տարածությունների վրա օդի աղտոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման» (EMEP) ծրագրի շրջանակներում ՀՀ-ում գործում է մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտվածության մոնիթորինգի առաջին մակարդակի տարածաշրջանային դիտակայան (Ամբերդի դիտակայան): Դիտակայանի մթնոլորտային օդի և մթնոլորտային տեղումների որակի մոնիթորինգի արդյունքները ներկայացվում են ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի քիմիական կոորդինացիոն կենտրոն՝ որը գործում է Նորվեգիայի օդի հետազոտության ինստիտուտի ներքո: Մոնիթորինգի և արտանետումների տվյալների հիման վրա Նորվեգիայի օդերևութաբանական ինստիտուտի


Մակերևութային և ստորերկրյա ջրերի որակի և քանակի մոնիթորինգի դիտակետերի ցանկը հաստատվել է համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի հունիսի 15-ի N212-Լ հրամանի:

Հիդրոգերևութաբանության, մթնոլորտային օդի, մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտացանց




1. ԿԼԻՄԱ

2023 թվականի ամառը դասվեց «տաք» ամառների շարքում: Ամռան միջին սեզոնային ջերմաստիճանը կազմել է 17.3 °C, որը նորմայից բարձր էր 1.5 °C-ով: Ամռան երեք ամիսներին օդի միջին ամսական ջերմաստիճանները բարձր էին 1961-1990թթ նորմաներից: Հատկապես տաք էր օգոստոս ամիսը, երբ օդի միջին ամսական ջերմաստիճանը նորմայից բարձր էր 3.1 °C-ով: Այն երրորդ ամենատաք օգոստոսն էր սկսած 1935 թվականից:



Գծապատկեր 1. Օդի միջին ամսական, սեզոնային ջերմաստիճանը



Գծապատկեր 2. Օդի Ամսական, սեզոնային տեղումների քանակը

2023 թվականի ամառը խոնավ էր. սեզոնային գումարային տեղումների քանակը կազմել է 169.7 մմ, որը նորմայի 114 % է: Մթնոլորտային տեղումները հունիս և հուլիս ամիսներին բարձր էին նորմայից և կազմել են համապատասխանաբար նորմայի 135 % և 117 %, իսկ օգոստոսը չորային էր. ամսական տեղումները կազմել են նորմայի 68 %:




Օդի ջերմաստիճանի շեղումը նորմայից




Մթնոլորտային տեղումների շեղումը նորմայից

Ամռան միջին ջերմաստիճանի աճը 1935-2023թթ. կազմել է 2.1 °C, իսկ տեղումները նվազել են 31 %-ով:




Գծապատկեր 3. Օդի ջերմաստիճանի շեղումները նորմայից ամռան սեզոնին 1935-2023 թթ



Գծապատկեր 4. Մթնոլորտային տեղումների շեղումները նորմայից ամռան սեզոնին 1935-2023 թթ


Կովկասի տարածաշրջանի ջերմաստիճանի և տեղումների շեղումներ

Համաձայն ERA5 գլոբալ ռեանալիզի տվյալների 2023 թվականի ամռանը օդի ջերմաստիճանը Կովկասի տարածաշրջանում նորմայից բարձր է եղել հիմնականում 0.5-1.5°C-ով, Արարատյան դաշտում՝ մինչև 2-2.5°C-ով: Մթնոլորտային տեղումները նորմայից բարձր են արևելյան շրջաններում (տեղ-տեղ 120-140%), մյուս շրջաններում տեղումները եղել են նորմային մոտ և նորմայից ցածր:




Կլիմայական ինդեքսներ

Ամառային օրերի թիվը (SU25 ինդեքս՝ օրերի թիվը ամռան ընթացքում, երբ առավելագույն ջերմաստիճանը 25°C-ից բարձր է) 2023թ. ամռան սեզոնին նորմայից բարձր է եղել միջինում 5 օրով, առավելագույն դրական շեղումները դիտվել են Մարտունիում՝ 13 օր, և Վանաձորում՝ 12 օր, իսկ բացասական շեղում գրանցվել է Աշոցքում՝ 8 օր, և Պուշկինի լեռնանցքում՝ 1 օր:




Գծապատկեր 5. Ամառային օրերի քանակը 2023 թվականի ամռանը (կարմիր) և նորման (կապույտ)

Օդի առավելագույն ջերմաստիճանները (TXx) 2023թ ամռան սեզոնին մոտ են եղել նորմային: Առավելագույն դրական շեղումներ դիտվել են Մեղրիում՝ 1.8 °C, և Արենիում՝ 1.6 °C: Առավելագույն բացասական շեղումը գրանցվել է Աշոցքում՝ -1.6 °C:



Գծապատկեր 6. Օրական առավելագույն ջերմաստիճանի ($^{\circ}\text{C}$) (TXx) արժեքները 2023 թվականի ամռանը (կարմիր) և նորման (կապույտ)

Օդի նվազագույն ջերմաստիճանների ավելագույն արժեքները (TNx) 2023թ. ամռան սեզոնին եղել են նորմայից բարձր՝ միջինում 0.7°C -ով: Առավելագույն դրական շեղումները դիտվել են Թալինում՝ 2.8°C , և Ուրցաձորում՝ 2.6°C :



Գծապատկեր 7. Օրական նվազագույն ջերմաստիճանի առավելագույն արժեքները (TNx) 2023 թվականի ամռանը (կարմիր) և նորման (կապույտ)

Հունիս-օգոստոս ամիսների երաշտային պայմանների վերլուծությունը

2023 թվականի հունիս-օգոստոս ամիսներին իրականացվել է երաշտի ինտենսիվության տասնօրյակային մոնիթորինգ 39 կայանների տվյալների հիման վրա, որոնք բնութագրական են ամբողջ տարածքի համար: Երաշտային պայմանների գնահատումը իրականացվել է 5 կարգով՝ 1-շատ ուժեղ, 2-ուժեղ, 3-միջին, 4-թույլ և 5-երաշտի բացակայություն:

Աղյուսակ 1. Երաշտի ինտենսիվության գնահատումը 2023 թվականի ամռանը

Մարզ	Կայան	01.06-10.06	11.06-20.06	21.06-30.06	01.07-10.07	11.07-20.07	21.07-31.07	01.08-10.08	11.08-20.08	21.08-31.08
Շիրակ	Գյումրի	5	5	5	5	5	5	5	2	1
	Ամասիա	5	5	5	5	5	5	4	3	5
	Արթիկ	5	5	5	5	5	5	5	4	1
	Աշոցք	5	5	5	5	5	5	5	5	4
Լոռի	Օձուն	5	5	5	5	5	5	5	5	3
	Տաշիր	5	5	5	5	5	5	5	5	5
	Վանաձոր	5	5	5	5	5	5	5	4	2
	Ստեփանավան	5	5	5	5	5	5	5	4	2
Տավուշ	Բաղրատաշեն	5	5	5	5	5	3	3	2	2
	Իջևան	5	5	5	5	5	5	5	4	2
	Դիլիջան	5	5	5	5	5	5	5	5	3
Գեղարքունիք	Սևան	5	5	5	5	5	5	5	5	4
	Սեմյոնովկա	5	5	5	5	5	5	5	5	4
	Գավառ	5	5	5	5	5	5	5	5	5
	Շորժա	5	5	5	5	5	5	5	3	2
	Մարտունի	5	5	5	5	5	3	2	2	2
	Ճամբարակ	5	5	5	5	5	5	5	5	2
	Մասրիկ	5	5	5	5	5	4	2	2	2
Կոտայք	Հրազդան	5	5	5	5	5	4	3	3	3
	Եղվարդ	3	2	3	3	2	1	1	1	2
	Ֆանտան	5	5	5	5	5	2	5	4	4
Արագածոտն	Թալին	5	5	5	5	5	2	1	1	1
	Ապարան	5	5	5	5	5	5	5	5	5
	Աշտարակ	2	2	3	3	2	1	2	1	1
	Ամբերդ	5	5	5	5	5	4	2	2	2
	Ծաղկահովիտ	5	5	5	5	5	5	5	5	2
Վայոց Ձոր	Արենի	4	3	2	2	2	1	1	1	1
	Որոտանի լ/գք	5	5	5	5	5	4	3	2	2
	Ջերմուկ	5	5	5	5	5	4	3	2	1
Սյունիք	Սիսիան	5	5	5	5	5	5	5	3	1
	Գորիս	5	5	5	5	5	5	5	3	2
	Կապան	-	5	5	5	2	2	2	1	2
	Մեղրի	3	2	2	2	1	1	1	1	2
Արարատ	Արարատ	2	1	2	2	2	1	1	1	1
	Ուրցաձոր	3	1	2	2	2	1	1	1	1
	Անանուն լ/գք	5	4	4	4	4	1	1	1	2
	Արտաշատ	3	3	4	3	3	1	1	1	1
Արմավիր	Արմավիր	3	3	3	3	3	1	1	1	1
	Մերձավան	3	3	3	3	2	1	2	1	1

Ինչպես երևում է աղյուսակից, հովտային շրջանների գրեթե բոլոր կայաններում, բացառությամբ Տավուշի, հուլիսի վերջին տասնօրյակից սկսած դիտվել է երաշտ, իսկ օգոստոսի երկրորդ տասնօրյակից սկսած երաշտային պայմանները ընդգրկել են նաև նախալեռնային և որոշ լեռնային շրջաններ:


Աղյուսակ 1-ից երևում է, որ հունիս-օգոստոս ամսվա ընթացքում ամենաուժեղ երաշտային պայմաններ դիտվել են օգոստոսի երրորդ տասնօրյակում, երբ գրեթե բոլոր կայաններում դիտվել է ուժեղ (2-րդ) և շատ ուժեղ (1-ին) երաշտ, բացառությամբ մի քանի կայանների (Տաշիր, Գավառ, Ապարան), որտեղ ամբողջ ամառվա ընթացքում դիտվել է երաշտի բացակայություն:

Արեգակնային ճառագայթում


Ամռան ամիսների արեգակնային ճառագայթման բաշխման քարտեզներից երևում է, որ հունիս ամսին գրանցված արժեքները ամենացածրն են ամռան սեզոնի ընթացքում: Հուլիսին ճառագայթման առավելագույն արժեքներ գրանցվել են հիմնականում Արարատյան դաշտում և Շիրակի մարզում՝ հասնելով մինչև 240-250Վտ/մ², նվազագույն արժեքներ գրանցվել են Լոռի-Տավուշ հատվածում, ինչպես նաև՝ Սյունիքում (100-

Swp wjhp

Ըստ առավելագույն ջերմաստիճանի դիտարկումների տվյալների տաք ալիք դիտվել է օգոստոսի 7-18-ը: Նշված ժամանակահատվածում ջերմային ալիք գրանցվել է գրեթե բոլոր կայաններում՝ տարբեր տևողությամբ: Ամենաերկար տևողությունը դիտվել է Գյումրիում՝ 12 օր, Հրազդանում և Ապարանում՝ 11 օր: Տաք ալիքով օրերի թիվը հիմնականում գերազանցել է նորման 2-3 օրով: Ջերմային ալիքի միջին ջերմաստիճանը գերազանցել է նորման միջինում 1.8°C-ով: Ամենատաք ալիքի առավելագույն ջերմաստիճանը գերազանցել է նորման միջինում 1.4 °C-ով, ամենամեծ շեղումը դիտվել է Ֆանտանում՝ 3.3 °C:




«Հայկիդրոսես» ՊՈԱԿ




Գծապատկեր 9. Տաք ալիքով օրերի թիվը ըստ առավելագույն ջերմաստիճանի 2023 թվականի ամռանը (կարմիր) և 1981-2010 թթ. նորման (կապույտ)

Օգոստոսի 10-12-ը Արարատյան դաշտում, Արագածոտնի մարզում, Սյունիքում և հյուսիսային շրջանների առանձին կայաններում դիտված առավելագույն ջերմաստիճանները գերազանցել են այդ օրերի երբևիցե դիտված օրական առավելագույն ջերմաստիճանները: Օգոստոսի 10-ին օդի առավելագույն ջերմաստիճանը Արարատի օդերևութաբանական կայանում հասել է 42.0 °C-ի:

Ըստ նվազագույն ջերմաստիճանի տվյալների վերլուծության՝ տաք ալիք դիտվել է օգոստոսի 7-16-ը: Նշված ժամանակահատվածում տաք ալիք գրանցվել է կայանների մեծ մասում՝ տարբեր տևողությամբ: Ամենաերկար տևողությունը դիտվել է Պուշկինի լեռնանցքում՝ 11 օր, Արթիկում՝ 10 օր: Արթիկում և Գյումրիում տաք ալիք գրանցվել է նաև հուլիսի 6-8-ը: Որոշ կայաններում տաք ալիքի դեպքեր ընդհանրապես չեն գրանցվել: Տաք ալիքով օրերի թիվը գերազանցել է նորման միջինում 2 օրով: Ալիքի միջին ջերմաստիճանը գերազանցել է նորման միջինում 0.7 °C-ով: Ամենատաք ալիքի առավելագույն ջերմաստիճանը գերազանցել է նորման միջինում 1.3 °C-ով, ամենամեծ շեղումը դիտվել է Երևան Ագրո օդերևութաբանական կայանում՝ 2.8 °C:




Գծապատկեր 10. Ամենաերկար ալիքի տևողությունը ըստ նվազագույն ջերմաստիճանի 2023 թվականի ամռանը (կարմիր) և 1981-2010 թթ. նորման (կապույտ)



Գծապատկեր 11. Տաք ալիքով օրերի թիվը՝ ըստ նվազագույն ջերմաստիճանի, 2023 թվականի ամռանը (կարմիր) և 1981-2010 թթ. նորման (կապույտ)

Քամու բաշխումը

Ամռան սեզոնին քամու միջին արագությունը հովտային շրջաններում՝ 500-800մ բարձրություններում գրանցվել է 1.7մ/վ, 800-1000մ բարձրություններում՝ 1.3մ/վ: Բացասական շեղում է գրանցվել 800-2000մ բարձրություններում: Ամենամեծ արագությամբ քամի արձանագրվել է 2000-2500մ բարձրության գոտում՝ 3.7մ/վ, ինչը նորմայից ավել է 0.4 մ/վ-ով :




Բարձրություն, մ	Ամառ	Նորմա	Շեղում
500-800	1.7	1.1	0.6
800-1000	1.3	1.4	-0.1
1000-1500	1.2	1.3	-0.1
1500-2000	2.0	2.1	-0.1
2000-2500	3.7	3.3	0.4
2500 - ավել	3.4	3.0	0.4

Քամու արագությունը (մ/վ) ամռանը

Օդի հարաբերական խոնավություն

2023թ ամռան հարաբերական խոնավությունը բոլոր բարձրություններում դիտվել է նորմայից բարձր կամ նորմային մոտ:




Բարձրություն	ամառ	նորմա
500-800	64.3	63.7
800-1000	47.3	48.0
1000-1500	64.6	64.1
1500-2000	71.8	66.8
2000-2500	74.3	70.5

Օդի հարաբերական խոնավությունը (%) ըստ բարձրությունների

Մթնոլորտային ճնշումը

2023թ ամռան մթնոլորտային ճնշումը դիտվել է նորմային մոտ կամ նորմայից բարձր:



բարձրություն	ամառ	նորմա
500-800	942.4	942.5
800-1000	913.2	912.0
1000-1500	877.5	876.7
1500-2000	820.7	819.3
2000-2500	777.0	776.2

Մթնոլորտային ճնշումն (hPa) ըստ

բարձրությունների


Երևան

Երևանում հունիս ամսվա միջին ջերմաստիճանը եղել է 23.5°C, շեղումը նորմայից կազմում է +0.7°C: Տեղումների քանակը եղել է 29.7 մմ, որը կազմում է հունիս ամսվա նորմայի 120%ը:


Երևանում հուլիս ամսվա միջին ջերմաստիճանը եղել է 26.8°C, շեղումը նորմայից կազմում է +0.2°C: Տեղումների քանակը եղել է 5 մմ, որը կազմում է հուլիս ամսվա նորմայի 33%ը:


Երևանում օգոստոս ամսվա միջին ջերմաստիճանը եղել է 29.2°C, շեղումը նորմայից կազմում է +2.9°C: Տեղումների քանակը եղել է 1 մմ, որը կազմում է օգոստոս ամսվա նորմայի 11%ը:

Երևանում օգոստոսի 10, 11 և 13-ին օդի օրական առավելագույն ջերմաստիճանները գերազանցել են այդ օրերի երբևիցե դիտված առավելագույն արժեքները՝ առավելագույնը հասնելով 41.1 °C-ի:



Գծապատկեր 12. Օրական առավելագույն (կարմիր), նվազագույն (կապույտ) և միջին (կանաչ) ջերմաստիճանները Երևանում 2023 թ ամռանը: Կետերով նշված է երբևիցե դիտված առավելագույն (նարնջագույն) և նվազագույն (կապույտ) օրական ջերմաստիճանները






Գծապատկեր 13. Ամսական տեղումների քանակը և դրանց շեղումները նորմայից (մմ) Երևանում 1966-2023 թթ. ժամանակահատվածում

2. ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հուլիս

2023թ. հուլիս ամսին հանրապետության շրջանների զգալի մասում օդի ամսական միջին ջերմաստիճանը եղել է նորմայի սահմաններում՝ մի փոքր դրական և բացասական շեղումներով:


Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից (1991-2020թթ.)



Հուլիս ամսվա միջին տասնօրյակային ջերմաստիճանը առաջին և երրորդ տասնօրյակում եղել է նորմայի սահմաններում՝ մի փոքր դրական և բացասական շեղումներով, երկրորդ տասնօրյակում՝ նորմայից ցածր 1-3°Cով:

Ամսական տեղումների քանակը հուլիսին Տավուշում կազմել է նորմայի 93-127%, Վայոց ձորում՝ 24-74%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 150-174%, հովտային շրջաններում՝ 13-102%, Շիրակում՝ 62-180%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 37-80%, նախալեռնային շրջաններում՝ 55%, Լոռիում՝ 89-215%, Գեղարքունիքում՝ 41-147%, Արմավիրում՝ 93%, Արարատում՝ 13-84%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 41-56%, լեռնային շրջաններում՝ 87-138%, Երևան քաղաքում՝ 33-84%:


Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից (նորմա՝ 1991-2020թթ.)



Հուլիսի 1-ին, 4-5-ին, 9-11-ին, 24-25-ին, 31-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ:

Հուլիսի 8-ին, 17-ին, 21-22-ին, 26-ին, 28-30-ին առանձին շրջաններում դիտվել են տեղումներ:

Հուլիսի 2-3-ին, 6-7-ին, 12-16-ին, 18-20-ին, 23-ին, 27-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:



Գծապատկեր 14. Տեղումներ, հուլիս 2023թ. (նորմա՝ 1991-2020թթ.)

Աղյուսակ 2. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2023թ. հուլիս


Մարզ / օդերևութաբանական կայան	Դիտման օրը(երը)	Երևույթի անվանումը	Բնութագիրը	Չափանիշը/ Չափորոշիչը	Փաստացի
Արագածոտն/Թալին	24	Ուժեղ քամի	Արագություն	≥25մ/վ	26մ/վ
Տավուշ/Իջևան	24	Ուժեղ քամի	Արագություն	≥25մ/վ	25մ/վ
Գեղարքունիք/Սևան	25	Ուժեղ անձրև	Ինտենսիվություն	≥30մմ/12ժամ	34.2մմ
Գեղարքունիք/Սեմյոնովկա	25	Ուժեղ անձրև	Ինտենսիվություն	≥30մմ/12ժամ	40.2մմ
Երևան/Մերձավան	30	Ուժեղ քամի	Արագություն	≥25մ/վ	28մ/վ
Երևան/Զվարթնոց	30	Ուժեղ քամի	Արագություն	≥25մ/վ	28մ/վ
Կոտայք/Հրազդան	30	Խոշոր կարկուտ	Տրամագիծ	≥20մմ	20մմ
Գեղարքունիք/Սեմյոնովկա	31	Մառախուղ	Տեսանելիություն	≤50մ	50մ

Առանձին օրերի, առանձին վայրերում դիտվել է՝ ուժեղ մառախուղ 50մ տեսանելիությամբ՝ Սեմյոնովկա, ուժեղ անձրև՝ Սևանում, Սեմյոնովկայում՝ 34-40 մմ, խոշոր կարկուտ՝ Հրազդանում՝ 20մմ տրամագծով, ուժեղ քամի՝ Թալինում, Իջևանում՝ Մերձավանում, Զվարթնոցում՝ 25-28 մ/վ արագությամբ:

Օգոստոս

2023թ. օգոստոս ամսին հանրապետության շրջանների զգալի մասում օդի ամսական միջին ջերմաստիճանը եղել է նորմայից բարձր 2-3°Cով:


Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից (նորմա՝ 1991-2020թթ.)



Օգոստոս ամսվա միջին տասնօրյակային ջերմաստիճանը առաջին տասնօրյակում եղել է նորմայից բարձր 1-3°Cով, երկրորդ տասնօրյակում՝ 2-4°Cով, երրորդ տասնօրյակում՝ նորմայից բարձր մինչև 1°Cով:


Ամսական տեղումների քանակը օգոստոսին Տավուշում կազմել է նորմայի 65-91%, Վայոց ձորում՝ 32-34%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 51-74%, հովտային շրջաններում՝ 144-333%, Շիրակում՝ 2-71%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 93-168%, նախալեռնային շրջաններում՝ 163%, Լոռիում՝ 23-102%, Գեղարքունիքում՝ 45-98%, Արմավիրում՝ 71%, Արարատում՝ 0-37%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 1-122%, լեռնային շրջաններում՝ 43-82%, Երևան քաղաքում՝ 21-79%:

Տեղումների քանակն և շեղումը բազմամյա միջինից (նորմա՝ 1991-2020թթ.)



Օգոստոսի 1-ին, 3-4-ին, 6-7-ին, 18-20-ին, 22-26-ին, 31-ին առանձին շրջաններում դիտվել են տեղումներ:

Օգոստոսի 2-ին, 8-17-ին, 21-ին, 27-ին, 31-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:
Օգոստոսի 5-ին, 29-30-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ:



Գծապատկեր 15. Տեղումներ, օգոստոս 2023թ. (նորմա՝ 1991-2020թթ.)

Աղյուսակ 3. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2023թ. օգոստոս


Մարզ / օդերևութաբանական կայան	Դիտման օրը(երը)	Երևույթի անկանոնը	Բնութագիրը	Չափանիշը/ Չափորոշիչը	Փաստացի
Լոռի/Օձուն	2	Խոշոր կարկուտ	Տրամագիծ	≥20մմ	40մմ
Տավուշ/Իջևան	2	Խոշոր կարկուտ	Տրամագիծ	≥20մմ	40մմ
Լոռի/Տաշիր	2	Ուժեղ անձրև	Ինտենսիվություն	≥30մմ/12ժամ	31.2մմ
Արարատ/Ուրցաձոր	2	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.0 °C
Արարատ/Արարատ	2	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.0 °C
Կոտայք/Ֆանտան	4	Ուժեղ անձրև	Ինտենսիվություն	≥30մմ/12ժամ	31.2մմ
Տավուշ/Բազրատաշեն	7, 8, 9	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+35.0 °C	+37.0° C
Տավուշ/Իջևան	7	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+35.0 °C	+37.0° C
Շիրակ/Արթիկ	10	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+32.0 °C	+34.0° C
Շիրակ/Ամասիա		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+32.0 °C	+33.0° C
Կոտայք/Հրազդան		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+32.0 °C	+33.0° C
Կոտայք/Ֆանտան		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+32.0 °C	+33.0° C
Արարատ/Ուրցաձոր		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.0 °C
Արագածոտն/Աշտարակ		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+35.0 °C	+37.0° C
Արարատ/Արարատ		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+42.0 °C
Արարատ/Արտաշատ		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+41.0 °C
Երևան/Մերձավան		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.0 °C
Երևան/Ալեքոյրգիական		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.0 °C
Անանուն 1-ցը	11	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+31.0 °C	+31.0°C
Վայոց Ձոր/Արենի		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.9 °C
Վայոց Ձոր/Ջերմուկ		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+32.0 °C	+32.4° C
Կոտայք/Հրազդան		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+32.0 °C	+34.0° C
Կոտայք/Ֆանտան		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+32.0 °C	+34.0° C
Արարատ/Ուրցաձոր		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+41.5 °C
Արագածոտն/Աշտարակ		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+35.0 °C	+41.0° C
Կոտայք/Եղվարդ		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+35.0 °C	+38.0° C
Արմավիր/Արմավիր		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.5 °C
Արարատ/Արարատ		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+41.0 °C
Արարատ/Արտաշատ	12	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+41.0 °C
Երևան/Մերձավան		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.8 °C
Երևան/Ալեքոյրգիական		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.0 °C
Վայոց ձոր/Արենի		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.6 °C
Վայոց ձոր/Ջերմուկ		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+32.0 °C	+32.5° C
Սյունիք/Մեղրի		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.5 °C
Գեղարքունիք/Շորժա		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+32.0 °C	+32.0° C
Կոտայք/Հրազդան		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+32.0 °C	+33.0° C
Կոտայք/Ֆանտան		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+32.0 °C	+33.0° C
Արարատ/Ուրցաձոր		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.3 °C
Արագածոտն/Աշտարակ	13	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+35.0 °C	+40.0° C
Կոտայք/Եղվարդ		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+35.0 °C	+37.5° C
Արագածոտն/Թալին		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+35.0 °C	+35.9° C
Արմավիր/Արմավիր		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.0 °C
Արարատ/Արարատ		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+41.0 °C
Արարատ/Արտաշատ		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+41.0 °C
Երևան/Մերձավան		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.8 °C
Երևան/Ալեքոյրգիական		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.5 °C
Վայոց ձոր/Արենի		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.1 °C
Վայոց ձոր/Ջերմուկ		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+32.0 °C	+32.0° C
Սյունիք/Մեղրի	13	Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.0 °C
Սյունիք/Գորիս		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+32.0 °C	+33.2° C
Կոտայք/Հրազդան		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+32.0 °C	+33.5° C
Արարատ/Ուրցաձոր		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+39.6 °C
Արագածոտն/Աշտարակ		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+35.0 °C	+40.0° C
Կոտայք/Եղվարդ		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+35.0 °C	+37.0° C
Արմավիր/Արմավիր		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.0 °C
Արարատ/Արարատ		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+41.0 °C
Արարատ/Արտաշատ		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.0 °C
Երևան/Մերձավան		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.5 °C
Երևան/Ալեքոյրգիական		Մաստիկ շոգ	Ջերմաստիճան	≥+40.0 °C	+40.0 °C

Օգոստոս ամսվա ընթացքում առանձին օրեր առանձին վայրերում դիտվել է ուժեղ անձրև. Տաշիրում և Ֆանտանում՝ 31.2մմ, խոշոր կարկուտ՝ Օձունում և Իջևանում՝ 40մմ տրամագծով: Առանձին օրեր առանձին վայրերում դիտվել են սաստիկ շոգեր:

Մեպտեմբեր

2023թ. սեպտեմբեր ամսին հանրապետության շրջանների զգալի մասում օդի ամսական միջին ջերմաստիճանը եղել է նորմայի սահմաններում՝ մի փոքր դրական և բացասական շեղումով:


Միջին ամսական ջերմաստիճանները և նրանց շեղումները նորմայից (նորմա՝ 1991-2020թթ.)



Մեպտեմբեր ամսվա միջին տասնօրյակային ջերմաստիճանը առաջին տասնօրյակում դիտվել է նորմայից բարձր 2-3°Cով, երկրորդ տասնօրյակում՝ նորմայից ցածր՝ 2-4°Cով, երրորդ տասնօրյակում՝ նորմայից բարձր մինչև 1°Cով:

Ամսական տեղումների քանակը սեպտեմբերին Տավուշում կազմել է նորմայի 97-179%, Վայոց ձորում՝ 78-126%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 114-151%, հովտային շրջաններում՝ 112-138%, Շիրակում՝ 81-179%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 71-121%, նախալեռնային շրջաններում՝ 185%, Լոռիում՝ 92-169%, Գեղարքունիքում՝ 84-142%, Արմավիրում՝ 71%, Արարատում՝ 84-101%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 55-92%, լեռնային շրջաններում՝ 59-117%, Երևան քաղաքում՝ 81-171%:


Տեղումների քանակը և շեղումը բազմամյա միջինից (նորմա՝ 1991-2020թթ.)



Սեպտեմբերի 1-ին, 5-7-ին, 15-ին, 20-ին, 23-ին, 27-28-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Սեպտեմբերի 2-4-ին, 8-ին, 11-ին, 14-ին, 16-19-ին, 21-22-ին, 24-ին 26-ին, 29-30-ին առանձին շրջաններում դիտվել են տեղումներ:

Սեպտեմբերի 9-10-ին, 12-13-ին, 25-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ:



Գծապատկեր 16. Տեղումներ, սեպտեմբեր 2023թ.

Աղյուսակ 4. Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ, 2023թ. սեպտեմբեր

<i>Մարզ / օդերևութաբանական կայան</i>	<i>Դիտման օրը(երը)</i>	<i>Երևույթի անվանումը</i>	<i>Բնութագիրը</i>	<i>Չափանիշը/ Չափորոշիչը</i>	<i>Փաստացի</i>
Սյունիք/Մեղրի	6	Սաստիկ շոգ	Ջերմաստիճան	$\geq +40.0\text{ }^{\circ}\text{C}$	$+40.8\text{ }^{\circ}\text{C}$
Լոռի/Վանաձոր	9	Ուժեղ անձրև	Բնտենսիվություն	$\geq 30\text{մմ}/12\text{ժամ}$	30.0մմ
Գեղարքունիք/Սեմյոնովկա	11	Ուժեղ մառախուղ	տեսանելիություն	$\leq 50\text{մ}$	50
Գեղարքունիք/Սեմյոնովկա	19	Ուժեղ մառախուղ	տեսանելիություն	$\leq 50\text{մ}$	50
Գեղարքունիք/Սեմյոնովկա	21	Ուժեղ մառախուղ	տեսանելիություն	$\leq 50\text{մ}$	50
Գեղարքունիք/Սեմյոնովկա	24	Ուժեղ մառախուղ	տեսանելիություն	$\leq 50\text{մ}$	50
Սյունիք/Կապան	25	Ուժեղ անձրև	Բնտենսիվություն	$\geq 30\text{մմ}/12\text{ժամ}$	30.2մմ

Մեպտեմբեր ամսվա ընթացքում առանձին օրեր առանձին վայրերում դիտվել է՝ ուժեղ անձրև՝ Վանաձորում և Կապանում՝ 30մմ, Մեղրիում՝ դիտվել է սաստիկ շոգ $+40.8\text{ }^{\circ}\text{C}$: Առանձին օրեր Սիմյոնովայում դիտվել են մառախուղներ:

3. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Մթնոլորտային օդի աղտոտումը կարող է լինել բնական և մարդածին: Աղտոտման պատճառներ կարող են հանդիսանալ՝


- վառելիքի այրումը (էլեկտրաէներգիայի արտադրություն, տրանսպորտ, արդյունաբերություն և տնային տնտեսություններ),
- արդյունաբերական արտանետումները, լուծիչների օգտագործումը, օրինակ՝ քիմիական և հանքարդյունաբերության ոլորտում,
- գյուղատնտեսությունը,
- թափոնների բաց այրումը,
- բնական աղբյուրների, ներառյալ հրաբխային ժայթքումների, լեռնային փոշու տարածումը, բույսերից ցնդող օրգանական միացությունների արտանետումները և այլն:

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ, որոնք իրենց մեջ պարունակում են ծանր մետաղներ:

Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակություններն որոշելու համար 2023 թվականի 3-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.meteomonitoring.am ինտերնետային կայքում:

2023 թվականի 3-րդ եռամսյակում մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՄԹԿ-ն: Երևանում հուլիս և օգոստոս ամիսներին, Արարատում՝ հուլիսին:


Փոշով աղտոտվածությունը կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով:



Գծապատկեր 17. Մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների

2023 թվականի 3-րդ եռամսյակում քաղաքների մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան Երևան քաղաքում՝ սեպտեմբեր ամսին:


Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:



Գծապատկեր 18. Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների

2023 թվականի 3-րդ եռամսյակում քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:

Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական գործընթացների ժամանակ:



Գծապատկեր 19. Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիայի փոփոխություններն ըստ քաղաքների


Երևան

Երևան քաղաքում կատարվում են փոշու*, ծծմբի երկօքսիդի**, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան:


2023 թվականի 3-րդ եռամսյակում Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹ-ն հուլիս ամսին՝ 1.2 անգամ, օգոստոսին աննշան ՍԹ-ի արժեքը, իսկ սեպտեմբերին՝ մոտ է եղել ՍԹ-ին:

Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է սեպտեմբեր ամսին՝ աննշան, հուլիս և օգոստոս ամիսներին՝ գտնվել է ՍԹ-ի սահմաններում:

Ծծմբի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹ-ները:




Գծապատկեր 20. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




*կախված մասնիկներ

**անհիդրիդ ծծմբային

Գծապատկեր 21. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները






Գծապատկեր 22. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 23. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի SO₂ միջին
ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Երևանի վարչական շրջաններ

Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Երևանի վարչական շրջաններ




Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)




Գյումրի

Գյումրի քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է մեկ անշարժ դիտակայան և 24 շաբաթական դիտակետ:


2023 թվականի 3-րդ եռամսյակում Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 24. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 25. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 26. Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:


2023 թվականի 3-րդ եռամսյակում Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 27. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները





Գծապատկեր 28. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 29. Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ



- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Միջպետական ճանապարհ
- Երկաթգծեր
- Բնակավայրեր



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն
բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Միջպետական ճանապարհ
- Երկաթգծեր
- Բնակավայրեր






Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն
բաշխվածության սանդղակը (մգ/մ³)





Ալավերդի

Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Գործում են երեք անշարժ դիտակայան և 42 շարժական դիտակետ:


2023 թվականի 3-րդ եռամսյակում Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:




Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը





- Պայմանական նշաններ
- Պասիվ նմուշառման դիտակետեր
 - Ակտիվ նմուշառման դիտակայաններ
 - Գետային ցանց
 - Զանապարհներ և փողոցներ
 - == Միջպետական ճանապարհ
 - Երկաթգծեր
 - Բնակավայրեր



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Միջպետական ճանապարհ
- Երկաթգծեր
- Բնակավայրեր






Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)



Հրազդան

Հրազդան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 17 շարժական դիտակետ:


2023 թվականի 3-րդ եռամսյակում Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:




Արարատ

Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 12 շարժական դիտակետ:


Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն հուլիսն՝ 1.2 անգամ, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ գտնվել է ՍԹԿ-ի սահմաններում: Ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 36. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 37. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները





Գծապատկեր 38. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Կապան

Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 11 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:


Կապան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:




Քաջարան

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 15 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 41. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 42. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Չարենցավան

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 10 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹ-ները:



Գծապատկեր 43. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 44. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Ծաղկածոր

Ծաղկածոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 14 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:


Ծաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 45. Ծաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները





Գծապատկեր 46. Ծաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 47. Ծաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին
ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ



-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակայաններ
-  Գետային ցանց
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Բնակավայրեր



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Բնակավայրեր



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)



Մթնոլորտային տեղումների որակ

2023 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում Ծաղկաձորում վերցվել է մթնոլորտային տեղումների 4 նմուշ: Նմուշներից յուրաքանչյուրում որոշվել է տեղումների որակը բնութագրող 32-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշներից մի մասի կոնցենտրացիաները բերված են Աղյուսակ 5-ում: Չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի տարեկան տեղեկագրում:

Աղյուսակ 5. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.


<i>Ամսաթիվ</i>	<i>Ջրածնային ցուցիչ</i>	<i>Էլեկտրահաղորդականություն, մկՍմ/սմ</i>	<i>Սուլֆատ իոն, մգ/լ</i>	<i>Քլորիդ իոն, մգ/լ</i>	<i>Նիտրատ իոն, մգ/լ</i>	<i>Ամոնիում իոն, մգ/լ</i>
<i>05.08.2023</i>	<i>6.6</i>	<i>29.6</i>	<i>1.84</i>	<i>0.4</i>	<i>2.2</i>	<i>1.10</i>
<i>09.09.2023</i>	<i>6.3</i>	<i>23.6</i>	<i>2.48</i>	<i>0.3</i>	<i>1.9</i>	<i>1.80</i>
<i>12.09.2023</i>	<i>6.4</i>	<i>27.5</i>	<i>1.64</i>	<i>0.3</i>	<i>2.4</i>	<i>0.68</i>
<i>18.09.2023</i>	<i>6.1</i>	<i>14.6</i>	<i>0.75</i>	<i>0.3</i>	<i>1.1</i>	<i>0.55</i>

**Եվրոպայում մեծ տարածությունների վրա օդի աղտոտիչների տարածման
մոնիթորինգի և գնահատման համատեղ ծրագիր**


Մթնոլորտային օդ

Ամբերդի միջազգային կայանում 2023 թվականի 3-րդ եռամսյակում կատարվել են մթնոլորտային օդի և փոշու դիտարկումներ: Մթնոլորտային օդի նմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու նմուշներում՝ քլորիդ, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 մետաղների պարունակությունները: Կատարված դիտարկումների վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն կտրվի տարեկան տեղեկագրում:

Ազոտի երկօքսիդի ($U\theta\Gamma_{\text{միջ}}=0.04\text{մգ/մ}^3$) և ամոնիակի ($U\theta\Gamma_{\text{միջ}}=0.04\text{մգ/մ}^3$) միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 48. Ամբերդի կայանում ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 49. Ամբերդի կայանում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Մթնոլորտային տեղումների որակ

2023 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում Ամբերդի կայանում վերցվել է տեղումների 3 նմուշ: Նմուշներից յուրաքանչյուրում որոշվել է տեղումների որակը բնութագրող 32-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշների կոնցենտրացիաները բերված են Աղյուսակ 6-ում: 3-րդ եռամսյակում չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի տարեկան տեղեկագրում:

Աղյուսակ 6. Ամբերդի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.

Ամսաթիվ	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդա— կանություն, մկՍմ/սմ	Սուլֆատ իոն, մգ/լ	Քլորիդ իոն, մգ/լ	Նիտրատ իոն, մգ/լ	Ամոնիում իոն, մգ/լ
04.07.2023	6.3	20.4	1.36	0.16	2.34	0.98
10-11.07.2023	6.5	62.8	6.02	1.36	4.73	0.35
12.09.2023	6.4	20.8	1.77	0.28	2.22	0.39

4. ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՍ ՁՐԵՐ

Միջավայրի պայմանների և մարդու առողջության վրա բացասաբար ազդող ֆիզիկական, քիմիական և կենսաբանական աղտոտիչների թափանցումը, առաջացումն ու կուտակումը բնական ջրերում կոչվում է ջրի աղտոտում: Ջրի աղտոտման աղբյուրները հետևյալն են.

- կենցաղային հոսքաջրերը.
- արդյունաբերական հոսքաջրերը.
- ձնհալի և անձրևների ժամանակ հողահանդակներից տեղափոխված պեստիցիդները.
- բնակավայրերից վնասակար նյութերը.
- անձրևի և ձյան միջոցով՝ մթնոլորտից անջատվող աղտոտող նյութերը:

Աղտոտման աղբյուրները կարող են լինել ինչպես կետային, այնպես էլ ցրված: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում աղտոտված են լինում կենսածին նյութերով, արդյունաբերական հոսքաջրերը՝ առավել հաճախ նավթամթերքներով, ֆենոլներով, ծանր մետաղներով (կապար, կադմիում, պղինձ, ցինկ և այլն) և բարդ օրգանական միացություններով (սինթետիկ լվացամիջոցներ, ներկեր, ճարպեր), որոնք վատթարացնում են ջրի որակը, խմելու և սննդի մեջ օգտագործելու համար դարձնում ոչ պիտանի, խախտվում են ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, նվազում է աղտոտող նյութերից ջրի ինքնամաքման հատկությունը, փոխվում է ջրային կենսաբազմազանության կազմն ու սննդային արժեքը: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ:

Մակերևութային ջրեր

2023 թվականի երրորդ եռամսյակում մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի դիտարկումներ իրականացվել են 91 հիդրոլոգիական դիտակետում, այդ թվում՝ 80 գետային, 2 ջրանցքի, 5 ջրամբարային (Արփի լիճ, Ախուրյան, Մարմարիկ, Ապարան, Ազատ) և 4 լճային (Սևանա լճում): Դիտակետերում իրականացվում են ամենօրյա դիտարկումներ մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ (ջրի մակարդակ, ջրի և օդի ջերմաստիճան, սառցային երևույթներ (առկայության դեպքում), ջրի ելքի չափումներ): 59 օպերատիվ դիտակետերից ամենօրյա ռեժիմով տվյալներ են ստացվել մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ, այդ տվյալների հիման վրա կազմվել են հիդրոլոգիական տեղեկագրեր և տրամադրվել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ շահառուների:

2023 թվականի 3-րդ եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է հանրապետության 41 գետի, Արփի լիճ, Ախուրյանի, Ապարանի, Ազատի, Երևանյան լիճ և Կեչուտի ջրամբարների, Արփա-Սևան և Որոտան-Արփա ջրատարների և Սևանա լճի 14 դիտակետում: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ): Ջրի որակի գնահատումը կատարվել է համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման: Մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրաքիմիական յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Եթե ջրի որակի տարբեր ցուցանիշներ ընկնում են որակի տարբեր դասերի մեջ, ապա վերջնական դասակարգման մեջ հաշվի է առնվում վատագույնը: Գործում է հետևյալ սկզբունքը. «Եթե

մեկը վատ վիճակում է, ապա բոլորն են վատ վիճակում»: Ջրամբարներում ջրի որակի գնահատումը կատարվում է միայն սնուցող նյութերով:

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակի մոնիթորինգ իրականացվել է ազգային ցանցում ընդգրկված 119 դիտակետում, այդ թվում՝ 25 շատրվանոց հորատանցք, 35 չշատրվանոց հորատանցք, 12 գրունտային ջրհոր և 47 բնաղբյուր: Դիտակետերում կատարվել են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի չափումներ ամսական 6 անգամ հաճախականությամբ:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հյուսիսային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 21 դիտակետում: Որոշ օպերատիվ հիդրոլոգիական դիտակետերի ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7. Հյուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. մ³/վ								
		հուլիս			օգոստոս			սեպտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Փամբակ	Թումանյան	10.2	9.76	105	4.15	6.54	63	3.89	6.10	64
Դեբեդ	Այրում	43.8	33.3	132	16.7	20.8	80	17.2	18.7	92
Չորագետ	Գարգառ	18.4	16.1	114	9.00	11.2	80	9.05	9.98	91
Աղստև	Իջևան	8.38	8.55	98	3.77	5.34	71	3.39	4.62	73
Գետիկ	Գոշ	2.55	2.73	93	0.99	1.63	61	0.80	1.56	51

Մակերևութային ջրերի որակ

Հյուսիսային ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 22 դիտակետում:

Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Սպիտակ քաղաքից ներքև՝ հուլիս և օգոստոս ամիսներին «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), Վանաձոր քաղաքից վերև ջրի որակը հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին «անբավարար» (4-րդ դաս), Վանաձոր քաղաքից ներքև ջրի որակը հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին «վատ» (5-րդ դաս):

Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «լավ» (2-րդ դաս), Այրում քաղաքից վերև ջրի որակը հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), սահմանի մոտ ջրի որակը օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Չորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում ջրի որակը

հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս):

Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկա գյուղից վերև հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Սարատովկա գյուղից ներքև հատվածում ջրի որակը հուլիս և օգոստոս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Մարց գետի ջրի որակը գետաբերանում հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս):


Ախթալա գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գարգառ գետի ջրի որակը ակունքում հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հուլիսին և օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


Շնող գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Դիլիջան քաղաքից ներքև ջրի որակը օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Իջևան քաղաքից վերև ջրի որակը օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Իջևան քաղաքից ներքև ջրի որակը օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):


Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև օգոստոսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանում ջրի որակը օգոստոսին և սեպտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):




Գծապատկեր 50. Փարբակ գետում ամսական ինդեքսի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 51. Դերեղ գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 52. Ախթալա գետում պղնձի կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 53. Ախթալա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր



Հյուսիսային ԶԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգ իրականացվել է 2 բնաղբյուրում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի և ծախսի չափումներ: Դիտակետերը գտնվում են Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղում:

N2059 դիտակետում ծախսի տատանումները չնչին են եղել՝ իջեցման միտումով (0.15-0.09 լ/վ), իսկ N2058 դիտակետում տատանումները չնչին են՝ բարձրացման միտումով:



Քծապատկեր 54. Հյուսիսային ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի ծախսերի փոփոխությունները

ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը





ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՐՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի
 - ▶ Որակի մոնիթորինգի դիտակետեր
 - ▶ Հիդրոլոգիական դիտակետեր
 - ▶ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Ախտորյանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Ախտորյանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում. այդ թվում՝ 14 գետային և 2 ջրամբարային: Օպերատիվ դիտակետերից երկուսի ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8. Ախտորյանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. մ³/վ								
		հուլիս			օգոստոս			սեպտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ախտորյան	Ախտորիկ	4.55	5.62	81	5.63	7.01	80	6.79	5.99	113
Մեծամոր	Մեծամոր	2.06	12.4	17	2.00	11.9	17	2.00	14.7	14

Մակերևութային ջրերի որակ


Ախտորյանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 11 դիտակետում:

Ախտորյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Գյումրի քաղաքից վերև ջրի որակը հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս), Գյումրի քաղաքից ներքև ջրի որակը հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Բազարան գյուղից ներքև ջրի որակը հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Աշոցք գետի ջրի որակը Մուսայելյան գյուղից վերև հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանում հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ և Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք հատվածներում օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Ռանչյար գյուղից ներքև հատվածում ջրի որակը օգոստոսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):



Գծապատկեր 55. Մեծամոր գետում ֆուֆատ խոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 40 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:

Ախուրյանի ՋԿՏ-ի Արարատյան արտեզյան ավազանի հատվածում՝ Եղեգնուտի, Վարդանաշենի, Տարոնիկի, Ակնաշենի, Ապագայի, Արագափի բոլոր չշատրվանող հորատանցքերում նկատվել են ջրի մակարդակների իջեցումներ 0.08-0.73մ-ի սահմաններում:


Ջրառատի N2021 և Ակնաշենի N2001 շատրվանող հորատանցքերում արձանագրվել են ջրի ծախսի բարձրացումներ: Տարոնիկի N2002 դիտակետում նկատվել է կայուն վիճակ, իսկ Ջրառատի N2021 դիտակետում ծախսը հուլիս ամսին դիտվել է 2.09 լ/վ, օգոստոսին նվազել է մինչև 0.7լ/վ, այնուհետև սեպտեմբերին բարձրացել, հասնելով՝ 2.52լ/վ: Գայի N1521 դիտակետում նկատվել է ջրի ծախսի թույլ իջեցում 0.1լ/վ-ով:

Բամբակաշատի և Հայկավանի (N2024, N2025) դիտակետերում նկատվել են ստորերկրյա ջրերի մակարդակի իջեցումներ 0.15մ-ով:


Արարատյան դաշտի նախալեռնային գոտու Արագածավան N2080, Արտենի N2081, Արտամետ N2083 համայնքների դիտակետերում դիտվել են ստորերկրյա ջրերի մակարդակների բարձրացումներ 0.68-1.81մ-ով, իսկ Մյասնիկյանի N2082 դիտակետում՝ մակարդակի իջեցում 0.11մ-ով:

Աշոցքի N2038, N2039, N2040 դիտակետերում և Յոդամարգի N2077 դիտակետում նկատվում են ծախսի ավելացումներ: Ծախսի կայուն վիճակ է դիտվել N2030 դիտակետում: Գյումրի քաղաքի N2037 դիտակետում աղբյուրի ծախսը բարձրանալով՝ սեպտեմբեր ամսին կազմել է 6.92 լ/վ:


Առափի գյուղի N2042 գրունտային ջրհորում ջրի մակարդակը իջել է 0.13մ-ով՝ հասնելով 1.6մ-ի, իսկ Ախուրյանի N2043 գրունտային ջրհորում մակարդակը բարձրացել է՝ հասնելով մինչև 8.39մ-ի:




Գծապատկեր 56. Ախուրյանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 57. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 58. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 59. Ախուրյանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները






Գծապատկեր 60. Ախուրյանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 61. Ախուրյանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակների փոփոխությունները

ՀՀ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի
 - ▶ Որակի մոնիթորինգի դիտակետեր
 - ▶ Հիդրոլոգիական դիտակետեր
 - ▶ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Ախուրյան ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հրազդանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում. այդ թվում՝ 13 գետային. 2 ջրամբարային և մեկ 1 ջրանցքի: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. մ³/վ								
		հուլիս			օգոստոս			սեպտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Հրազդան	Հրազդան	4.04	4.99	81	3.68	3.73	99	2.48	3.47	71
Հրազդան	Արգել	2.66	3.33	80	2.30	3.12	74	1.86	3.18	58
Հրազդան	Երևան	3.56	3.13	114	1.85	2.80	66	1.86	2.59	72
Մարմարիկ	Հանքավան	1.23	1.23	100	0.65	0.57	114	0.57	0.47	121
Մարմարիկ	Աղավնաձոր	2.84	3.37	84	2.59	1.85	140	1.53	1.51	101
Քասախ	Վարդենիս	0.35	0.71	49	0.35	0.49	71	0.60	0.54	111
Քասախ	Աշտարակ	2.54	3.45	74	2.10	3.46	61	2.33	2.64	88

Մակերևութային ջրերի որակ

Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև հատվածում հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև ջրի որակը հուլիս և օգոստոս ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Աշտարակ քաղաքից վերև հուլիսին ջրի որակը գնահատվել «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև ջրի որակը հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս):

Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև հուլիսին և օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), գետաբերանի ջրի որակը հուլիս և օգոստոս ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):


Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հուլիս և օգոստոս ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից վերև հատվածներում օգոստոսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Գետառ գետի ջրի որակը գետաբերանում օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում՝ օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Ծաղկաձոր (Տանձաղբյուր) գետի ջրի որակը օգոստոսին Ծաղկաձոր քաղաքից վերև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս):



Գծապատկեր 62. Քասախ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 63. Հրազդան գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 64. Հրազդան գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:


Հրազդանի ՋԿՏ-ի Արարատյան արտեզյան ավազանի հատվածում Դաշտավան, Հովտաշատ, Սիս համայնքների N1526, N1523, N2003 դիտակետերում ջրերի ծախսերը նվազել են 0.07-1.04լ/վ սահմաններում, իսկ Ջրահովիտ, Հովտաշեն և Սիս համայնքների N2007, N2008, N1535, N1536 դիտակետերում դիտվել է ծախսի կայուն վիճակ: Մասիսի N1519 դիտակետում շատրվանող հորատանցքում ջրի ծախսը 4.71 լ/վ-ից ավելացել է հասնելով 5.02լ/վ, իսկ Հովտաշենի N2053 դիտակետում՝ 0.06 լ/վ-ից հասել է 0.15լ/վ:




Սիս համայնքի N78, Ջրահովիտի N2004 և Հայանիստի N2005 դիտակետերում դիտվել են ջրի մակարդակի բարձրացումներ 0.02-0.13մ սահմաններում:


Արարատյան դաշտի նախալեռնային գոտու՝ Արագածի N2085, Լեռնամերձի N2088, դիտակետերում դիտվել է ջրի մակարդակների նվազում, իսկ Դոդսի N2086 հորատանցքում՝ համեմատաբար կայուն մակարդակ: Փարպիի N2119 հորատանցքում ջրի մակարդակը բարձրացել է 0.44մ-ով:

Հրազդանի ՋԿՏ-ի ք.Երևանի N970 դիտակետում նկատվել է չնչին ավելացում, իսկ Ղազարավանի N755 աղբյուրի ջրի ծախսը կայուն է՝ 2.9լ/վ:


Կարբի N1636, Բջնի N246, Սուլակի N1297, N1832 դիտակետերում դիտվել են ծախսի իջեցումներ, ամենացածր ծախսերը եղել են սեպտեմբեր ամսին՝ 5.97լ/վ (N1636), 2.0լ/վ (N246), 6.19լ/վ (N1832) և 0.05լ/վ (N1297): Ապարանի N2051 և N2107 դիտակետերում նույնպես դիտվել են ծախսերի իջեցումներ: Մինչև 0.95մ մակարդակների իջեցումներ դիտվել են Նիգավանի N2010, N2011 դիտակետերում: Բյուրականի N2108 և Բուժականի N2105 դիտակետերում ծախսերը ավելացել են 0.06-0.19լ/վ:









Գծապատկեր 68. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 69. Հրազդանի ՋԿՏ-ի գրունտային ջրերներում ջրի մակարդակների փոփոխությունները

ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր


Մակերևութային ջրերի

- որակի մոնիթորինգի դիտակետեր
- հիդրոլոգիական դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր

- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17 դիտակետում. այդ թվում՝ 12 գետային. 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. մ³/վ								
		հուլիս			օգոստոս			սեպտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ձկնագետ	Ծովագյուղ	0.89	0.52	171	0.20	0.28	71	0.19	0.26	73
Մասրիկ	Ծովակ	2.47	2.65	93	1.43	2.41	59	1.90	2.72	70
Մարտունի	Գեղհովիտ	1.13	2.13	53	0.34	0.70	49	0.43	0.64	67
Արգիճի	Վ. Գետաշեն	1.17	2.79	42	0.32	1.41	23	1.31	1.65	79
Գավառագետ	Նորատուս	2.15	2.86	75	1.71	2.38	72	2.18	2.70	81

Մակերևութային ջրերի որակ

Սևանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 18 դիտակետում:

Ձկնագետ գետի ջրի որակը Սեմյոնովկա գյուղից վերև հուլիսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս):

Մասրիկ գետի ջրի որակը գետաբերանում հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Սոթք գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Կարճաղբյուր գետի ջրի որակը Ախպրաձոր գյուղից վերև հուլիս և օգոստոս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հուլիս և օգոստոս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Վարդենիս գետի ջրի որակը Վարդենիկ գյուղից վերև երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարտունի գետի ջրի որակը Գեղհովիտ գյուղից վերև հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս):


Արգիճի գետի ջրի որակը Լեռնահովիտ գյուղից վերև երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում՝ հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Ծակքար գետի ջրի որակը գետաբերանում հուլիս և օգոստոս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):


Շողվազ գետի ջրի որակը գետաբերանում հուլիս և օգոստոս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս):

Գավառագետ գետի ջրի որակը Ծաղկաշեն գյուղից վերև հուլիսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Արփա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-արևելք ընկած հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):



Գծապատկեր 70. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 71. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 72. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 15 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:

Սևանի ՋԿՏ-ի դիտակետերում դիտվել են ջրի մակարդակների և ծախսերի իջեցումներ:



Ակունքի N31, N902, N1053 դիտակետերում ջրի ծախսերի իջեցումները կազմել են 0.07-62.9լ/վ:

Վարդենիս, Վաղաշեն, Գանձակ, Դարանակ համայնքների N1809, N1810, N1812, N2090, N2013, N2095 շատրվանոց հորատանքերում հուլիս ամսից դիտվել են ջրի մակարդակների և ծախսերի իջեցումներ:


Գանձակի N2013 դիտակետում օգոստոս ամսին աղբյուրի ծախսը նվազելով հասել է 0.94լ/վ:

Վարդենիսի N1811, Խաչաղբյուրի N2095 դիտակետերում դիտվել են ջրի մակարդակի և ծախսի համեմատաբար կայուն ռեժիմներ:


Լիճքի N2101 հորատանցքում ջրի մակարդակը, իջնելով 0.13մ, կազմել է երկրի մակերևույթից ցածր 1.51մ:



Փճապատկեր 73. Սևանի ՋԿՏ-ի փնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները



Գծապատկեր 75. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները



Գծապատկեր 74. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները

Սևանա լիճ

2023 թվականի 3-րդ եռամսյակում հիդրոլոգիական դիտարկումներ են իրականացվել Սևանա լճի 4 դիտակետում՝ (Սևանա թերակղզի, Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի): Հիդրոոդերևութաբանական տվյալների հիման վրա կազմվել է Սևանա լճի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների ջրային հաշվեկշիռը:

Աղյուսակ 11. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2023 թվականի 3-րդ եռամսյակում Հուլիս

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ3)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ3) 1961–2022թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	15.71	11.02	9.16	35.89	21.2	47.4	106.3
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	2.73	2.06	1.99	6.78	0.00	17.3	49.4
Տեղումները լճի մակերևույթի վրա	13.8	6.40	24.2	44.4	5.30	49.9	122.6
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	4.20	6.20	10.2
Ընդամենը	34.84	22.08	38.05	94.97	50.8	116.3	220.3
ԵԼՔ							
Հրազդան գետով	16.36	24.78	21.95	63.09	20.4	83.7	150.2
Գոլորշացում լճի մակերևույթից	47.6	56.4	55.1	159.1	73.0	117.2	159.4
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.50	1.10	1.70
Ընդամենը	64.36	81.58	77.45	223.39	99.0	206.5	265.4
Կուտակում (նվազում)	25.7	-38.4	-51.0	-63.7	-265.5	-86.5	110.3
Բացարձակ անկապք	-55.22	-21.1	11.6	-64.72		-3.30	
Հարաբերական անկապք %	61.3	25.9	13.0	29.0	0.10	5.90	26.6

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ2	Լճի ծավալը, կմ3
Ամսվա առաջին օրը	1900.54	1278.891	38.2277
Ամսվա վերջին օրը	1900.49	1278.415	38.1640
Միջին ամսական	1900.53	1278.796	38.2150

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում -0.05 (մ)
 Մակարդակի փոփոխությունը 01.01.23 31.07.23 ընթացքում 0.21 (մ)
 31.07.23 և 31.07.22 մակարդակի տարբերությունը -0.15 (մ)

Օգոստոս

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2022թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	7.44	6.37	7.38	21.19	16.3	30.1	52.8
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	0.95	0.88	0.94	2.77	0.00	8.93	26.6
Տեղումները լճի մակերևույթի վրա	8.20	0.20	10.6	19.0	2.60	34.6	148.0
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	4.10	6.60	12.3
Ընդամենը	19.19	10.05	21.62	50.86	26.2	76.6	197.8
ԵԼՔ							
Հրազդան գետով	25.44	24.24	18.43	68.11	42.1	89.4	150.5
Գոլորշացում լճի մակերևույթից	50.50	57.70	55.40	163.6	100.5	147.4	212.3
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.14	1.70
Ընդամենը	76.34	82.34	74.23	232.91	151.6	246.6	342.3
Կուտակում (նվազում)	-38.2	-25.5	-63.7	-127.4	-270.6	-162.7	-20.0
Բացարձակ անկապ	-18.95	-46.79	11.09	-54.65		-8.60	
Հարաբերական անկապ %	24.8	56.8	13.0	23.5	0.10	4.70	35.1

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ2	Լճի ծավալը, կմ3
Ամսվա առաջին օրը	1900.49	1278.415	38.1640
Ամսվա վերջին օրը	1900.39	1277.464	38.0366
Միջին ամսական	1900.45	1278.035	38.1130

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում -0.10 (մ)

Մակարդակի փոփոխությունը 01.01.23 31.08.23 ընթացքում 0.11 (մ)

31.08.23 և 31.08.22 մակարդակի տարբերությունը -0.17 (մ)

Մեայտեմբեր

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2022թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճք թափվող գետերով	7.26	9.37	9.82	26.45	21.3	31.4	57.8
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	0.86	1.21	2.03	4.10	0.00	7.15	18.4
Տեղումները լճի մակերևույթի վրա	16.5	18.1	8.80	43.4	1.10	30.0	106.7
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.60	7.80	4.10	6.50	12.3
Ընդամենը	27.22	31.28	23.25	81.75	34.5	73.2	169.7
ԵԼՔ							
Հրազդան գետով	19.85	8.64	0.00	28.49	0.62	51.3	153.0
Գոլորշացում լճի մակերևույթից	50.3	47.9	38.5	136.7	117.0	158.2	191.0
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	70.55	56.94	38.90	166.39	130.3	228.5	325.7
Գուտակում (նվազում)	-38.20	-38.30	-25.40	-101.9	-244.5	-152.1	19.0
Բացարձակ անկապք	-5.13	12.64	9.75	17.26		0.50	
Հարաբերական անկապք %	7.27	18.2	20.0	9.40	0.20	4.40	41.6

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ2	Լճի ծավալը, կմ3
Ամսվա առաջին օրը	1900.39	1277.464	38.0366
Ամսվա վերջին օրը	1900.31	1276.703	37.9347
Միջին ամսական	1900.35	1277.084	37.9856

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում -0.08 (մ)
 Մակարդակի փոփոխությունը 01.01.23 30.09.23 ընթացքում 0.03 (մ)
 30.09.23 և 30.09.22 մակարդակի տարբերությունը -0.13 (մ)

2023 թվականի հուլիսի 1-ին Սևանա լճի մակարդակը կազմել է 1900.54 մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է եղել 20 սմ-ով: 2023 թվականի սեպտեմբերի 30-ին լճի մակարդակը կազմել է 1900.31 մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ ցածր է եղել 13 սմ-ով: 2023 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը լճի մակարդակը բարձրացել է 3 սմ-ով, իսկ հուլիսի 1-ից սեպտեմբերի 30-ը՝ իջել 23 սմ-ով: Սևանա լճի 2023 թվականի տարեկան առավելագույն մակարդակը դիտվել է հուլիսի 5-11-ը և կազմել 1900.56 մ:

Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխված ջրի ծավալը հուլիս ամսին կազմել է 6.784 մլն մ³, օգոստոսին՝ 2.774 մլն մ³, սեպտեմբերին՝ 4.101 մլն մ³:

2023 թվականի մայիսի 14-ից Սևանա լճից սկսվել է իրականացվել ոռոգման նպատակով ջրառ: Ըստ Հրազդան ՀԷԿ-ի ջրանցք-Գեղամավան դիտակետի տվյալների հուլիս ամսին լճից բացթողնված ջրի գումարային ծավալը կազմել է 63.085 մլն մ³, օգոստոսին՝ 68.110 մլն մ³, սեպտեմբերին՝ 28.489 մլն մ³: Այսպիսով, 2023 թվականի ընդհանուր ջրառը լճից ըստ Գեղամավանի դիտակետի տվյալների սկսվել է մայիսի 14-ից և շարունակվել մինչև սեպտեմբերի 14-ը ներառյալ և ընդհանուր ջրառի քանակը կազմել է 228.234 մլն մ³:

2023 թվականի հուլիսի 1-ին Սևանա լճի մակերեսը կազմել է 1278.891 կմ², ծավալը՝ 38.2277 կմ³, իսկ եռամսյակի վերջին օրը՝ սեպտեմբերի 30-ին համապատասխանաբար՝ 1276.703 կմ² և 37.9347 կմ³:

Սևանա լճի ջրերի որակ


Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է Փոքր և Մեծ Սևանների երկու դիտակետում՝ տարբեր խորության շերտերում: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման Հավելված 12.1-ի համաձայն:

Մեծ Սևանի մակերևութային շերտում ջրի որակը երեք ամիսներին գնահատվել է 3-րդ դաս («միջակ» որակ), միջին շերտերում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ), հատակամերձ շերտում՝ հուլիս, սեպտեմբեր ամիսներին՝ 5-րդ դաս («վատ» որակ), օգոստոսին՝ 4-րդ դաս («անբավարար» որակ):


Փոքր Սևանի մակերևութային շերտում ջրի որակը երեք ամիսներին գնահատվել է 3-րդ դաս («միջակ» որակ), միջին շերտերում՝ հուլիսին՝ 5-րդ դաս («վատ» որակ), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ 4-րդ դաս («անբավարար» որակ), հատակամերձ շերտում՝ երեք ամիսներին 5-րդ դաս («վատ» որակ):

Երեք ամիսներին Սևանա լճի ջրի որակի գնահատականները ներկայացված են Աղյուսակ 12-ում:


Մեծ Սևան լճում կենսածին նյութերի պարունակությունները.




Գծապատկեր 75. Մեծ Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 76. Փոքր Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 77. Մեծ Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 78. Փոքր Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 79. Մեծ Սևանում նիտրատ իոնի՝ կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 80. Փոքր Սևանում նիտրատ իոնի՝ կոնցենտրացիաների փոփոխությունները

* Հուլիս, օգոստոս ամիսներին նիտրատ իոնի 0-ին մոտ կոնցենտրացիաները վկայում են լճում ֆիտոպլանկտոնի կողմից նիտրատ իոնի ինտենսիվ յուրացման մասին

Աղյուսակ 12. Սևանա լճի ջրի որակը 2023 թվականի 3-րդ եռամսյակում

Հուլիս

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Մեծ Սևան, 0.5մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր	3-րդ	3-րդ
Մեծ Սևան, 5մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր	3-րդ	3-րդ
Մեծ Սևան, 10մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Բոր	4-րդ	
Մեծ Սևան, 20մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն	3-րդ	4-րդ
	Մանգան, բոր, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
Մեծ Սևան, 25մ խորություն	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Մանգան, բոր	4-րդ	
Մեծ Սևան, 30մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, երկաթ, ալյումին, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Բոր	4-րդ	
	Մանգան	5-րդ	
Փոքր Սևան, 0.5մ խորություն	Բոր	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 5մ խորություն	ԹՔՊ, բոր	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 10մ խորություն	ԹՔՊ, բոր	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 20մ խորություն	ԹՔՊ, բոր	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 30մ խորություն	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	
Փոքր Սևան, 55մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
	Մանգան	5-րդ	

<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>	<i>Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>
<i>Փոքր Սևան, 70մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Նիտրիտ իոն, մանգան</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 80մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Նիտրիտ իոն, մանգան</i>	<i>5-րդ</i>	

Օգոստոս

<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>	<i>Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>
<i>Մեծ Սևան, 0.5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, սուլֆատ իոն</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Մեծ Սևան, 5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ, սուլֆատ իոն, ԿՉՆ</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Մեծ Սևան, 10մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ, սուլֆատ իոն</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Մեծ Սևան, 20մ խորություն</i>	<i>Լուծված թթվածին, ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ՀԱԱ, սուլֆատ իոն, ԿՉՆ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 25մ խորություն</i>	<i>Լուծված թթվածին, ԹՔՊ, ամոնիում իոն, մանգան, բոր, ՀԱԱ, սուլֆատ իոն</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 30մ խորություն</i>	<i>Լուծված թթվածին, ԹՔՊ, ամոնիում իոն, մանգան, բոր, ՀԱԱ, սուլֆատ իոն</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 0.5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, բոր, ալյումին, սուլֆատ իոն</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Փոքր Սևան, 5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, սուլֆատ իոն</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>ԿՉՆ</i>	<i>5-րդ</i>	



<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>	<i>Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>
<i>Փոքր Սևան, 10մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԸԱԱ, սուլֆատ իոն, ԿԶՆ</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Փոքր Սևան, 20մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ԸԱԱ, սուլֆատ իոն, ԿԶՆ</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Փոքր Սևան, 30մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԸԱԱ, սուլֆատ իոն</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Փոքր Սևան, 55մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, սուլֆատ իոն</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Լուծված թթվածին, նիտրիտ իոն, մանգան</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 70մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրատ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, սուլֆատ իոն</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Լուծված թթվածին, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 80մ խորություն</i>	<i>ԹՔՊ, երկաթ, բոր, ալյումին, ԸԱԱ, սուլֆատ իոն</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>4-րդ</i>	
	<i>Լուծված թթվածին, նիտրիտ իոն, մանգան, ԿԶՆ</i>	<i>5-րդ</i>	

Մեպտեմբեր

<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>	<i>Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>
<i>Մեծ Սևան, 0.5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, բոր, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Մեծ Սևան, 5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Մեծ Սևան, 10մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>

<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>	<i>Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների</i>
<i>Մեծ Սևան, 20մ խորություն</i>	<i>ԹՔՊ, երկաթ, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 25մ խորություն</i>	<i>Լուծված թթվածին, ԹՔՊ, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, երկաթ, բոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 30մ խորություն</i>	<i>ԹՔՊ, բոր</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>4-րդ</i>	
	<i>Լուծված թթվածին, նիտրիտ իոն, մանգան</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 0.5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Փոքր Սևան, 5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Փոքր Սևան, 10մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Փոքր Սևան, 20մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 30մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 55մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
	<i>Մանգան</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 70մ խորություն</i>	<i>ԹՔՊ, բոր, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Լուծված թթվածին, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>4-րդ</i>	
	<i>Նիտրիտ իոն, մանգան</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 80մ խորություն</i>	<i>ԹՔՊ, բոր, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>4-րդ</i>	
	<i>Լուծված թթվածին, նիտրիտ իոն, մանգան</i>	<i>5-րդ</i>	



ՀՀ Սեանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱՎԱՐ ԼԵՂՆԵՐ

- Մարզկենտրոն
- Բազարներ
- Բնակավայրեր
- ▲ Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտակետեր
- ▲ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Պետական սահման
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Սեանի ջրավազանային կառավարման տարածք

3-րդ	«միջակ»	
4-րդ	«անբավարար»	
5-րդ	«վատ»	



Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք
Մակերևութային ջրեր
Հիդրոլոգիական դիտարկումներ

Արարատյան ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 12 դիտակետում. այդ թվում՝ 11 գետային և 1 ջրամբարային (Ագատի ջրամբար): Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 13-ում:

Աղյուսակ 13. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. մ³/վ								
		հուլիս			օգոստոս			սեպտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ագատ	Գառնի	0.82	3.29	25	0.76	2.61	29	0.84	2.67	31
Վեդի	Ուրցաձոր	0.064	0.59	11	0.003	0.34	1	0.008	0.33	2
Արփա	Ջերմուկ	1.92	4.64	41	2.09	3.07	68	2.65	2.74	97
Արփա	Արենի	2.86	7.50	38	2.58	4.63	56	3.54	5.48	65

Մակերևութային ջրերի որակ


Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հուլիսին և օգոստոսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև և Վայք քաղաքից վերև հատվածներում հուլիս և օգոստոս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վայք քաղաքից ներքև, Եղեգնաձոր քաղաքից վերև և Արենի գյուղից ներքև հատվածներում ջրի որակը հուլիս և օգոստոս ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Դարբ գետի ջրի որակը ակունքում հուլիս և օգոստոս ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանում՝ հուլիսին՝ գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Եղեգիս գետի ջրի որակը Շատին գյուղից ներքև հատվածում հուլիս և օգոստոս ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Որոտան-Արփա ջրատարի ջրի որակը թունելի ելքի հատվածում հուլիս և օգոստոս ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):



Գծապատկեր 81. Արփա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները


Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 23 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:


Մալիշկա, Ջերմուկ, Ջեղեա, Կեչուտ և Գառնի համայնքների N502, N2048, N2050, N2060, N2045, N2046, N2047 աղբյուրներում ջրի ծախսերի աճը կազմել են 0.1-18.42լ/վ: Համեմատաբար կայուն ռեժիմ է դիտվել Ագարակաձորի N785 դիտակետում: Գառնիի N845 դիտակետում ջրի ծախսը նվազել է 0.08լ/վ-ով, իսկ Եղեգնաձորի N787 դիտակետում՝ 0.84լ/վ-ով:

Արարատյան դաշտի հարավ-արևելյան հատվածի՝ Արմաշ, Եղեգնավան, Լուսառատ և Արարատ համայնքների N2075, N2065, N2074, N2076, N2064, N2052 դիտակետներում դիտվել են ջրի մակարդակների բարձրացումներ:


Դալար գյուղի N2072 և Արտաշատ քաղաքի N2073 դիտակետներում շարունակվում են գրունտային ջրերի մակարդակների իջեցումները: Արտաշատի N2069, Վեդիի N2006 հորատանքներում նույնպես նկատվել են ջրի մակարդակների իջեցումներ: Սուրենավանի N2067, Արտաշատի N2062, Դալարի N2063 շատրվանող հորատանցքերի դիտակետներում հիմնականում նկատվում են համեմատաբար կայուն ծախսեր:




Գծապատկեր 82. Արարատյան ՋԿՏ-ի քնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 83. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 84. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները





Գծապատկեր 85. Արարատյան ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 89. Արարատյան ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակների փոփոխությունները

ՀՀ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



Հարավային ջրավազանային կառավարման տարածք
Մակերևութային ջրեր
Հիդրոլոգիական դիտարկումներ

Հարավային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 9 դիտակետում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14. Հարավային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. մ³/վ								
		հուլիս			օգոստոս			սեպտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Մեղրիգետ	Մեղրի	0.70	4.36	16	0.070	1.40	5	0.056	0.80	7
Ողջի	Կապան	2.91	8.29	35	1.33	3.44	39	1.16	2.42	48
Որոտան	Գորայք	1.68	3.71	45	1.67	2.47	68	1.71	2.23	77

Մակերևութային ջրերի որակ

Կարձևան գետի ջրի որակը գետաբերանում հուլիս և սեպտեմբեր ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեղրիգետ գետի ջրի որակը Մեղրի քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում հուլիս և օգոստոս ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Աճանան (Նորաշենիկ) գետի ջրի որակը Աճանան գյուղից վերև հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հուլիսին և օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գեղի գետի ջրի որակը Աջաբաջ գյուղից վերև հուլիսին և օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս):


Որոտան գետի ջրի որակը Գորայք գյուղից վերև հուլիսին և օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Միսիան քաղաքից վերև հատվածում ջրի որակը հուլիսին և օգոստոսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Միսիան քաղաքից ներքև ջրի որակը հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս):

Միսիան գետի ջրի որակը Արևիս գյուղից վերև հուլիսին և օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում՝ «անբավարար» (4-րդ դաս):

Վարարակ գետի ջրի որակը Գորիս քաղաքից վերև և ներքև հատվածներում հուլիսին և օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):



Գծապատկեր 86. Վարձևան գետում պղինձի կոնցենտրացիաների փոփոխությունները





Գծապատկեր 87. Վարձևան գետում նիտրիտ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հարավային ԶԿՏ-ի ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 7 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի և ծախսի չափումներ:



Սպանդարյանի N537 դիտակետում դիտարկվել է ջրի ծախսերի կայուն վիճակ: Գորայք, Շաքի, Գորիս և Անգեղակոթ համայնքների N529, N899, N532, N1175 դիտակետերում ջրի ծախսի ավելացումները կազմում են 0.02-0.17լ/վ:

Գորիսի N1399 և Անգեղակոթի N1323 դիտակետերում դիտվում է ջրի ծախսերի աննշան իջեցում 0.08-0.21լ/վ:



Գծապատկեր 88. Հարավային ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի ծախսերի փոփոխությունները

ՀՀ Հարավային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- ▲ որակի մոնիթորինգի դիտակետեր
- ▲ հիդրոլոգիական դիտակետեր
- ◆ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Ջրամբարներ

Ախուրյանի, Արփիլիճ, Ագատի և Ապարանի ջրամբարներում իրականացվում են հիդրոլոգիական դիտարկումներ և ջրի որակի մոնիթորինգ, Մարմարիկի ջրամբարում իրականացվում են միայն հիդրոլոգիական դիտարկումներ, իսկ Կեչուտի ջրամբարում և Երևանյան լճում՝ միայն ջրի որակի մոնիթորինգ:


2023 թվականի 3-րդ եռամսյակում ջրամբարների լցվածությունների մեծությունները եռամսյակի ամիսների վերջին օրերի դրությամբ ներկայացված են Աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15. Ջրամբարների ջրալցվածությունը 2023 թվականի 3-րդ եռամսյակում


Ջրամբարի անվանումը	Ջրամբարի ընդհանուր ծավալը, մլն. խոր.մ	Փաստացի լցվածությունը, հուլիսի 31-ի դրությամբ		Փաստացի լցվածությունը, օգոստոսի 31-ի դրությամբ		Փաստացի լցվածությունը, սեպտեմբերի 30-ի դրությամբ	
		ընդամենը մլն. խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %	ընդամենը մլն. խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %	ընդամենը մլն. խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %
Ախուրյան	525	162.04	31	73.94	14	88.72	17
Արփիլիճ	105	65.00	62	47.60	45	37.30	36
Ագատ	70	27.98	40	15.43	22	9.67	14
Ապարան	91	20.14	22	10.97	12	7.04	8
Մարմարիկ	24	5.10	21	1.86	8	1.88	8

Ջրամբարների ջրի որակ

Արփիլիճ ջրամբարի ջրի որակը հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Ախուրյանի ջրամբարի ջրի որակը հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Ապարանի ջրամբարի ջրի որակը հուլիսին և օգոստոսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Երևանյան լիճ ջրամբարի ջրի որակը օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Ագատի ջրամբարի ջրի որակը օգոստոսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Կեչուտի ջրամբարի ջրի որակը հուլիս և օգոստոս ամիսների ընթացքում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):



Գծապատկեր 89. Երևանյան լճում նիտրիտ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 90. Երևանյան լճում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Աղյուսակ 16. Ջրամբարների ջրի որակը 2023 թվականի 3-րդ եռամսյակում

Հուլիս

Ջրամբար	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Արփի լճի ջրամբար (109)	Ամբարտակի մոտ	ԿՉՆ	5-րդ	5-րդ
Ախուրյանի ջրամբար (110)	Ամբարտակի մոտ	ԹԿՊ ₅ , ԹՔՊ	3-րդ	4-րդ
		ԿՉՆ	4-րդ	
Ապարանի ջրամբար (111)	Ամբարտակի մոտ	-	2-րդ	2-րդ
Կեչուտի ջրամբար (114)	Ամբարտակի մոտ	-	2-րդ	2-րդ

Օգոստոս

Ջրամբար	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Ապարանի ջրամբար	ամբարտակի մոտ (111)	–	2	2-րդ
Երևանյան լիճ	ամբարտակի մոտ (112)	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	4	5-րդ
		Նիտրիտ իոն	5	
Ազատի ջրամբար	ամբարտակի մոտ (113)	–	2	2-րդ
Կեչուտի ջրամբար	ամբարտակի մոտ (114)	–	2	2-րդ



Սեպտեմբեր

Ջրամբար	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի կարգավիճակի դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դաս ըստ ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Արփի լճի ջրամբար	Ամբարտակի մոտ (109)	ԿԶՆ	3-րդ	3-րդ
Ախուրյանի ջրամբար	Ամբարտակի մոտ (110)	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ

Արաքս գետ

ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ԶՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՅԱՆՑ

2023 թվականի 3-րդ եռամսյակում դիտարկումներ են իրականացվել Արաքս գետի 6 դիտակետում: Որոշված ցուցանիշներից գերազանցվել են թթվածնի քիմիական պահանջարկի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, կալիումի, նատրիումի, մագնեզիումի, պղնձի, ցինկի, քրոմի, նիկելի, մանգանի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի համապատասխան ՍԹԿ-ները: Արաքս գետի աղտոտվածության գերազանցումների վերաբերյալ մանրամասն տեղեկությունը ներկայացված է աղյուսակ 17-ում:



ՊԱՅԱՄԱՆԱԿԱՆ ԼՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտակետեր
- Կիլոբորգիական դիտակետ
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ



Աղյուսակ 17. Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգի գնահատման արդյունքները 2023 թվականի 3-րդ եռամսյակում

Հուլիս

Դիտակետի տեղադրություն (դիտակետի համար)	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)														
	Թթվածնի քիմիական առահանք, ՍԹԿ=30 մգ/լ	Ամոնիում իոն, ՍԹԿ=0,39 մգN/լ	Նիտրիտ իոն, ՍԹԿ=0,024 մգN/լ	Սուլֆատ իոն, ՍԹԿ=100 մգ/լ	Կալիում ՍԹԿ= 50 գ/լ	Նատրիում ՍԹԿ=120 մգ/լ	Մագնեզիում, ՍԹԿ=40 մգ/լ	Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Նիկել, ՍԹԿ=0,01 մգ/լ	Մանգան, ՍԹԿ=0,01 մգ/լ	Վանադիում, ՍԹԿ=0,001 մգ/լ	Երկաթ, ՍԹԿ=0,5 մգ/լ	Ալյումին, ՍԹԿ=0,04 մգ/լ	Սելեն, ՍԹԿ=0,001 մգ/լ
0.9 կմ գլ. Հուշակերտից ներքև	–	1.2	–	–	–	–	–	21.2	20.7	4.8	25.2	18.2	4.4	119.3	–
2 կմ ք. Ագարակից հարավ	1.3	2.2	–	2.4	1.4	3.5	1.4	3.6	8.1	–	9.1	20.9	2.2	12.4	5.0
2.5 կմ ք. Ագարակից հարավ-արևելք	1.3	1.7	1.2	2.4	1.4	3.3	1.4	13.2	16.3	2.5	24.6	25.7	6.4	49.5	4.2

Օգոստոս

Դիտակետի տեղադրություն (դիտակետի համար)	Կոնցենտրացիաների գերազանցումը ՄԹԿ-ից (անգամ)													
	Անոնիում իոն, ՄԹԿ=0,39 մգN/լ	Սուլֆատ իոն, ՄԹԿ=100 մգ/լ	Կալիում ՄԹԿ= 50 գ/լ	Նատրիում ՄԹԿ=120 մգ/լ	Մագնեզիում, ՄԹԿ=40 մգ/լ	Ցինկ, ՄԹԿ=0,01 մգ/լ	Պղինձ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Նիկել, ՄԹԿ=0,01 մգ/լ	Մանգան, ՄԹԿ=0,01 մգ/լ	Վանադիում, ՄԹԿ=0,001 մգ/լ	Երկաթ, ՄԹԿ=0,5 մգ/լ	Ալյումին, ՄԹԿ=0,04 մգ/լ	Սելեն, ՄԹԿ=0,001 մգ/լ
2 կմ ք. Ագարակից հարավ	3.1	2.3	1.5	3.6	1.5	1.5	15.2	9.7	1.4	14.7	28.4	2.4	19.0	3.9
2.5 կմ ք. Ագարակից հարավ-արևելք	2.5	2.5	1.4	3.3	1.7	–	11.3	8.6	–	14.7	30.8	2.4	12.6	4.8

Մեպտեմբեր

Դիտակետի տեղադրություն (դիտակետի համար)	Կոնցենտրացիաների գերազանցումը ՄԹԿ-ից (անգամ)							
	Ցինկ, ՄԹԿ=0,01 մգ/լ	Պղինձ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Նիկել, ՄԹԿ=0,01 մգ/լ	Մանգան, ՄԹԿ=0,01 մգ/լ	Վանադիում, ՄԹԿ=0,001 մգ/լ	Երկաթ, ՄԹԿ=0,5 մգ/լ	Ալյումին, ՄԹԿ=0,04 մգ/լ
0.9 կմ գլ. Հուշակերտից ներքև	1.3	14.6	16.7	4.5	16.8	17.1	2.9	74.2

5. ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝

- գործարանները,
- արդյունաբերական և կենցաղային թափոնները,
- գյուղատնտեսությունը,
- տրանսպորտը և այլն:

Մարդու գործունեության արդյունքում միջավայր թափանցած ծանր մետաղների մեծ մասը կուտակվում է հողում: Այնուհետև դրանց մի մասը անցնում է ջրային միջավայր, մի մասը կլանվում է բույսերի կողմից և հայտնվում սննդային շղթայում: Հողի արդյունաբերական աղտոտման հիմնական աղբյուրներն են մետաղաձուլական գործարանները, մետաղական հանքարդյունաբերությունը և արդյունաբերական այլ ձեռնարկությունների թափոնները: Նման աղտոտման աղբյուրները կարող են առաջացնել հողի աղտոտվածություն ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով:

Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն:



2023 թվականի 3-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Գեղարքունիքի մարզի Ջիլի հանքային դաշտում (նախկին Ջիլի հանքավայր): Ուսումնասիրվել են ընդերքօգտագործման թափոնների լքված լցակույտերի 3 տեղամաս՝ Գլավնայա Ժիլա, Եֆիմով և Չաթին-Դարա: Հանքային դաշտի մոտակա բնակավայրն է Ջիլ գյուղը:

